

«1926 թվականի հոկտեմբերի 22-ին, երեկոյան ժամը 7-ին և 11-ին, Լենինական քաղաքում և գավառում տեղի ունեցան ստորերկրյա ուժեղ ցնցումներ»

(«Խորհրդային Հայաստան» օրաթերթ)

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ձերդ Սրբութեան և Գերագոյն Խորհրդի կարգադրութեան համաձայն Հոկտ. 25-ին ճանապարհ ընկայ Լենինական, աղէտեալների վիճակի հետ առ տեղեան ծանօթանալու և Մ. Աթոռի կողմից մխիթարութեան և հովուական պարտք կատարելու, յանձնելու նաև մեր աղքատիկ գանձարանից որպէս նպաստ նշանակուած հինգ հարիւր (500) ռուբլին:

Հետևեալ օրը ժամադիր լինելով Հանրապետական Արտակարգ Յանձնաժողովի նախագահ Ա. Երզնկեանի հետ, տեսակցութիւն ունեցայ, գրաւոր յանձնելով Մ. Աթոռի կողմից նշանակուած լուման և յայտնելով Ձերդ Սրբութեան վշտաբեկ վիճակը աղէտի հետևանքով և Գերագոյն Խորհրդի ու միաբանութեան խորին ցաւը: Խնդրեցի նաև անարգելք մտնելու, ուր որ պէտք լինի, իմ հովուական պարտքը կատարելու ու մխիթարական ու քաջալերական խօսք ուղղելու արկածեալներին: Յանձնաժողովի նախագահը շնորհակալութիւն յայտնեց Մ. Աթոռի կողմից ուղարկուած նպաստի համար, և շատ ցանկալի համարեց մեր ներկայութիւնը և քաջալերական խօսքը աղէտեալներին, օգտակար համարելով այդ խուճապի և յուսալքման ենթարկուած ժողովրդի համար: Նոյն իմաստով խօսեց և Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Ա. Կարինեանը, որ ներկայ էր այնտեղ:

Հոկտեմբերի 27-ին տեղի առաջնորդ Տ. Իսահակ ծ. վարդապետի և երկու հոգաբարձուներու հետ շրջեցի բոլոր եկեղեցիները և քաղաքի մի մասը, պարտէզները, ուր թեթև, ձեռաց շինած վրաններ տակ պատսպարուած էին տնաւէր աղէտեալները: Եկեղեցիներից համեմատաբար աւելի վնասուածը Փրկչի եկեղեցին է, որ հարաւային պատին վերից վար ճեղք

է ստացել, իսկ հիւսիսային պատի հին ճեղքը մի քիչ աւելի լայնացել է: Այսուհետև դռների կամարների, լուսամուտների և պատերի այլ և այլ տեղերում ստացել է անվտանգ ճեղքուածներ, ընդհանուր առմամբ եկեղեցուն վտանգ չէ սպառնում, կարելի կլինի ճեղքերը լցնելուց յետոյ՝ աստուածպաշտութիւնը շարունակել: Հարցրել եմ մասնաւոր կերպով քննող ճարտարապետների կարծիքը: Ապա Լուսաւորիչ եկեղեցին է, որ ամենից շատ ճեղքեր է ստացել, թէ՛ արևելեան և թէ՛ արևմտեան ճակատներից, թեթև կերպով և միւս պատերի վերայ, բայց ոչ վտանգաւոր, իսկ Ս. Նշանն ու Աստուածածինը աւելի քիչ և մասնակի նշանակութիւն ունեցող:

Երկու նուագում շրջեցի քաղաքը և այցելեցի յատկապէս այն պարտէզներն ու վայրերը, ուր ժողովուրդը մեծ խմբերով ապաստան է գտել ժամանակաւոր, իրենց իսկ միջոցներով, կապերտներից, գորգերից և այլն պատրաստած վրաններ տակ, ամէն տեղ քաջալերական մի խօսք ուղղելով, Ձերդ Սրբութեան օրհնութիւնը յայտնելով և այլն: Քաղաքի կործանման տպաւորութիւնն անհաւոր է. № 24 և 26 և նրանց կտրող 29 և 30 փողոցները՝ յատկապէս, քաղաքի մի ծայրից մինչև միւսը, գրեթէ, աւերուած է, տապալուած են ամբողջ պատեր, նստած են ամբողջապէս կամ մասամբ սառաստաղները, և եթէ կանգուն են շէնքերը, վտանգաւոր ճեղքեր են ստացել, ենթակայ փլուզումների. սրդէն հրդեհաշէջների խումբը Թբիլիսիից եկած, փողոցէ փողոց շրջում է և քանդում այդպիսի պատերը: Շատ քիչ տներ կան, որ միայն անվտանգ ճեղքեր են ստացել և աւելի քիչ բոլորովին անվնասները:

Հոկտեմբերի 30-ին կառք վարձելով այցելեցի քաղաքի մօտակայ մի քանի գիւղերը, ուղեկցութեամբ Տ. Իսահակ ծ. վարդապետի և Աստուածածնի երեսփոխի. առաջին գիւղը Ալէքսանդրովկան էր, ընդամենը 84 տնից բաղկացած, որից ոչ մէկը չէ ազատուած: Քանդուած է բոլորովին դպրոցական շէնքը, սրբատաշ քարով գողտրիկ եկեղեցին մասամբ քանդուած է և մասամբ մեծ ճեղքեր ստացել: Գիւղում մահացած գիւղացիների տուած տեղեկութեամբ 18 հոգի, վիրաւորուած 35, անասուններ սատակել են 30—40 հատ:

Այնտեղից անցանք Դահարլու գիւղը. այստեղ աղէտը շատ աւելի անհաւոր է. 155 տնից չէ ազատուել և ոչ մէկը, գիւղը փլատակների կոյտ է. սրբատաշ քարով շինած եկեղեցին իւր արևելեան խորանով և խաչկալով, որ գիւղացիների ասելով նոր էին շինել տուել և զարդարել, կործանուած է. մեռած են 117 հոգի և վիրաւորուած 68 հոգի, որ փոխադրուած են ամերիկացիների հիւանդանոցը: Կործանուած է նաև ուսումնարանը: Մի ընտանիք բաղկացած 15 հոգուց, միայն երեքն են ազատուած. մի ընտանիք վեց հոգուց բաղկացած, չի ազատուել և ոչ մէկը և այսպէս բազմաթիւ ընտանիքներ նիւթականի հետ ունեցել իրենց անդամների, աշխատող ձեռքերի, սիրելիների կորուստներ:

Բայանդուր գիւղը 173 տնից բաղկացած նոյն աւերման վիճակին է հասած, կործանուած են բոլոր տները, փլատակների կոյտեր դարձած. կանգուն էր մնացած միայն մի տուն քարուկրից, բայց նա էլ անբնակելի դարձած: Յունաց և Հայոց եկեղեցիները, սրտաբաշ քարով, կործանուած են երկուսն էլ: Մահացածների թիւը 18 է և վիրաւորներինը 75, որ մեծ մասով քաղաք էին փոխադրուած: Եւ այս վիճակի մէջ են մօտ 15 գիւղ, իսկ ընդհանրապէս Աղինից մինչև Օրթաքիլիսայ, երկաթուղագծի ուղղութեամբ շատ ու քիչ վնասուած են աւելի քան 25 գիւղ:

Հնագիտական արժէք ունեցող շէնքերից վնասուած է Երազգաւորսի Սմբատ Ա-ի շինած հոյակապ եկեղեցին Թ. դարու վերջերի գործ, մեր սահմանի մէջ գտնուած Խոշաւանքը (ո՛չ Անի Հոռոմոսը) թեթև վնասներ է ստացել և ճեղքեր. Տիգնիսի բերդը Ախուրեանի միւս ափին: Անիի մասին հաստատուն տեղեկութիւններ ստանալ չկարողացայ:

Աղէտը մեծ է, Հոգևոր Տէր, և անկշռելի, բայց այս մեծ աղէտի մէջ ևս մխիթարական այն երևոյթը, որ օգնութեան գործը կազմակերպուած է հնարաւորութեան սահմանների մէջ լաւ. օգնութեան են հասնում մեր կառավարութիւնից զատ և հասարակական կազմակերպութիւններն ու հաստատութիւնները, նոյն իսկ հարևան Վրաստանն ու Ադրբեջանը: Եռանդուն գործունեութիւն է ցոյց տալիս Հայաստանի Կարմիր խաչը բժիշկ Ադիբէկեանի ղեկավարութեամբ, Վրաստանի Կարմիր խաչի խմբակը, ոչ միայն քաղաքում, այլ և գիւղերում: Նոյն իսկ ամերիկացիների խնամքի տակ գտնուած որբանոցների հասակաւոր տղայքն իրենց ուսուցչի ղեկավարութեամբ օգնութեան էին հասել գիւղացիներին, փլատակները մաքրելու կամ գետնափոր նոր խրճիթներ փորելու: Ռուսական զինուորութիւնը նոյնպէս մեծ ծառայութիւն է արել այս աղէտի ժամանակ, քաղաքում կարգ պահելով, իսկ գիւղերում էլ փլատակների տակից վնասուածներին հանելու և գոյքը փրկելու գործում: Սրանց վերայ պէտք է սուելացնեմ, թէ Ձերդ Վեհափառութեան և Գերագոյն Խորհրդի կարգադրութիւնը յատուկ ներկայացուցիչ ուղարկելու աղէտի վայրը՝ քաջալերելու և յուսադրելու՝ փոքր մխիթարութիւն չէր հաւատացեալների համար թէ՛ քաղաքում և թէ՛ գիւղերում, ուր շնորհակալութեան և երախտագիտութեան խօսքեր էին լսում Մ. Աթոռի հասցէին իմ հոգևոր պարտականութիւնները կատարելիս: Քաղաքում երեք անգամ քարոզ խօսեցի, իսկ Հոկտ. 31-ին նաև պատարագ մատուցի, աղէտի զոհերի յիշատակին:

Վերջացնելով համառօտ զեկուցումս Ձերդ Վեհափառութեան յատուկ ուշադրութիւնը պէտք է խնդրեմ աղէտեալ շրջանների քահանայութեան վրայ. նրանց նիւթական վիճակը շատ և շատ աւելի պիտի ծանրանայ, քան սոսկ քաղաքացիների և գիւղացիների վիճակը, որովհետև նրանք էլ բնաւեր դառնալով իրենց հօտի հետ, այսուհետև դժուար թէ, որ և է յոյս ունենան իրենց ժողովրդից ստացուելիք տուրքի համար, որ նրանց ապրուստի միջոցն է: Նրանք արժանի են Ձերդ Վեհափառութեան հայրապետական ուշադրութեան և հաւատացեալ եղբայրների նիւթական օգնութեան:

Ձերդ Վեհափառութեան խոնարհ որդի՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ս. Էջմիածին.
10-ին Նոյեմբ. 1926 թ.